

ԵԱՀԿ գրասենյակն աջակցում է հայ կանանց քաղաքական և տնտեսական առաջխաղացման գնահատմանը

ԿԱՊԱՆ, Հայաստան, 5 դեկտեմբերի 2007թ. – Այսօր Սյունիքի մարզկենտրոն Կապանում հանրությանը ներկայացվեց ԵԱՀԿ աջակցությամբ իրականացված հետազոտությունը, համաձայն որի հայ կանանց ներկայացվածությունը հասարակական և տնտեսական կյանքում անբավարար է:

Հաշվետվության մեջ նշվում է, որ չկա կանանց միավորված շարժում, տնտեսական և քաղաքական ցանցերի կարևոր մասը վերահսկում են տղամարդիկ, որոնք նաև կանանց փոխարեն կայացնում են կարևոր որոշումները: Գյուղական բնակավայրերում կանայք հաճախ անտեղյակ են իրենց իրավունքներից և չունեն բավականաչափ ռեսուրսներ և կապեր՝ ակտիվ տնտեսական և քաղաքական կյանք վարելու համար:

«Հուսով եմք, որ այս զեկույցն իր ներդրումը կունենա Հայաստանում գենդերային հավասարության քննարկման հարցում և կխթանի կանանց դերը քաղաքական և տնտեսական կյանքում Սյունիքում և Հայաստանի մյուս շրջաններում», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինսոբ:

Հաշվետվությունը ներկայացնում է իրավիճակի բարեփոխման ուղղությամբ մի շարք առաջարկություններ՝ առանձնացնելով ռեսուրս կենտրոնների հիմնադրումը՝ որպես գործարարության և քաղաքական ոլորտներում տեղի կանանց խրախուսելու միջոց:

«Հայ կանանց հզորացնելու գործին մեծապես կնպաստի փոփոխություններին հետամուտ ակտիվ կանանց համախմբող ֆորումի աջակցությունը, լրատվամիջոցների հետ համագործակցությունը՝ գենդերային խնդիրների և կարծրատիպերի մասին իրազեկման ուղղությամբ և ավելի լավ գենդերային վիճակագրության ապահովումը», - ասաց գենդերային հարցերով փորձագետ, Շվեդիայի խորհրդարանի նախկին պատգամավոր Բիրգիտա Ուիսթրանդը:

Ուիսթրանդը զեկույցը իրականացրել է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ Արմինե Մխիթարյանի հետ համատեղ:

2006թ-ից ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և Կապանում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման ներկայացուցչությունը ծրագրեր են իրականացնում՝ կանանց խրախուսման ուղղությամբ: